ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/49

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/49 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Դարֆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դարֆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 14.12.2017թ. բողոքով բողոքարկել է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հանձնաժողովի գործողությունները (անգործությունը)՝ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գնանշման հարցման միջոցով անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարված հրավերի և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները, մասնավորապես՝ գնման առարկայի բնութագիրը և մատակարարման պայմանները: «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կազմելիս բազմակողմանի

ուսումնասիրություն չի կատարվել գնման առարկայի ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային շուկայում առկայության վերաբերյալ, համապատասխան ստորաբաժանումը սխալ և չհիմնավորված եզրահանգման է եկել կապված գնման առարկայի (այսուհետ՝ անվադողեր) շահագործման պայմանների վերաբերյալ, մատակարարման ժամկետները կազմված են այնպես, որ մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում: «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կազմակերպած «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով գնման առարկա է սահմանվել 215/75R16 չափսի անվադողեր, մատակարարման ենթակա ընդհանուր քանակը - 136 հատ, իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել - պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն պնդում է, որ 215/75R16 չափսի անվադողերը լայն պահանջարկ չունեն սպառողների կողմից, պրակտիկայում Պատվիրատուի մոտ առկա տեխնիկայի համար չեն օգտագործվում, չափսերով դրանք շատ անհարմար և բարձր են ամենագնաց մեքենաների վրան տեղադրելու համար: Ի հավելումն՝ Ընկերությունը նշել է նաև այն փաստը, որ 215/75R16 չափսի անվադողերը (առանց C նշումի) ոչ միայն հազվագյուտ են հանդիպում հայաստանյան շուկայում, նաև դրանք հազվագյուտ են միջազգային շուկայում, քանի որ տվյալ չափսի անվադողերը հիմնականում նախատեսված են թեթև բեռնատար մեքենաների համար /C նշումով /: Անվադողեր արտադրող գործարանները տվյալ թեթև բեռնատար մեքենաների համար նախատեսված չափսի անվադողերը /215/75R16C/ արտադրում են միայն /C նշումով/: Ի հավաստումն վերոնշյալի՝ ցանկացած

անձնավորություն համացանցի միջոցով կատարելով 215/75R16 չափսի անվադողերի որոնում՝ կբախվի մի «անհասկանալի» իրավիճակի, որ արտադրող գործարանների մոտավորապես 95% տոկոսը այդ չափսի անվադողերը առաջարկում են «C» նշումով, բացառությամբ որոշ չինական արտադրողների:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն, հանդիսանալով ավտոպահեստամասերի շուկայում առաջատար ընկերություններից մեկը, հիմնվելով իր մասնագիտական բազմամյա փորձի վրա պնդում է, որ Ֆորդ մակնիշի թեթև բեռնատար մեքենաների վրա տեղադրվում են նույն 215/75R16C չափի անվադողեր կամ այլ չափի անվադողեր սակայն նույնպես «C» նշումով: Հաշվի առնելով թեթև բեռնատար մեքենաների ընդհանուր քաշը, փոխադրվող բեռը (այս պարագայում մեքենայի տեխնիկայով համալրվածությունը), սպասարկող անձնակազմի մեքենայում առկայությունը և այլ ցուցանիշները՝ բնական անհրաժեշտություն է առաջանում օգտագործել անվադողեր «C» նշումով կամ այսպես կոչված (C բորտ) անվադողերը, որոնք իրենց դիմացկունությամբ, ավելի բարձր բեռնվածության ցուցանիշներով և հզորացված կողային շերտերի արդյունքում հանդիսանում են իդեալական տարբերակ թեթև բեռնատար մեքենաների համար:

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն նշել է, որ նման տեսակի անվադողերի այդ մեծ քանակը 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցների համար նախատոնական և հետտոնական օրերի ընթացքում մատակարարելը չի հանդիսանում ողջամիտ ժամկետ և խիստ սահմանափակում է հնարավոր մասնակիցների շրջանակը: Ի հավելումն՝ Ընկերությունը նշել է նաև այն փաստը, որ կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի վերոնշյալ թերությունների մասին «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն բանավոր տեղեկացրել է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ին, սակայն Ընկերության կողմից ներկայացված փաստարկները անտեսվել են «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից:

Կիրառելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գործողությունների (անգործության), որոշումների նկատմամբ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն պնդում է, որ դրանք չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Որպես լրացուցիչ հիմնավորում 14.12.2017թ. դիմում-բողոքի մեջ նշված փաստերի՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն ներկայացրել է Ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Ընկերությունը հայտնել է, որ տարբեր տարեթվերի և մոդիֆիկացիաների Ֆորդ տրանզիտ մեքենաների ընդհանուր քաշը տատանվում է 2500 կգ-ից մինչև 3500 կգ: Համացանցի միջոցով կատարված որոնման արդյունքում Ընկերության կարծիքով լավագույն տարբերակը հանդիսացող /TOYO/ 215/75R16 չափսի ձմեռային անվադողերի բեռնվածության ինդեքսը 103 է, որը վերածելով կիլոգրամի ստացվում է 875 կգ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր անվադողի առավելագույն բեռնվածության ինդեքսը հավասար է 875-ի, իսկ չորս հատ անվադողի դեպքում հավասար է 3500 կգ: Իսկ եթե գումարենք նաև այն փաստը, որ մեքենան համալրված է տեխնիկայով, մեքենայում առկա է սպասարկող անձնակազմ և բուժօգնության կարիք ունեցող քաղաքացին և որոշ դեպքերում քաղաքացուն ուղեկցող հարազատը՝ ստացվում է, որ մեքենայի անվադողերը շահագործվում են կամ առավելագույն թույլատրելի բեռնվածությամբ, կամ նույնիսկ որոշ դեպքերում գերազանցելով այն, որը շտապբուժօգնության մեքենայի համար անթույլատրելի է:

215/75R16C կամ նույն նշանակությունը ունեցող 215/75R16LT (Light Truck) անվադողերի բեռնվածության ինդեքսները տատանվում են 110-ից - 117-ի սահմաններում, որը վերածելով կիլոգրամի ստացվում է 1060-1285 կգ: Ակնհայտ է, որ LT կամ C անվադողերը երաշխավորում են ավելի բարձր բեռնվածություն և ապահովություն:

Լրացուցիչ ներկայացվել է https://mosautoshina.ru և www.tyreleader.co.uk կայքերի միջոցով 215/75R16 անվադողերի վերաբերյալ կատարված որոնման արդյունքները, որից ըստ Ընկերության պարզ է դառնում, որ այդ չափսի անվադողերը հիմնականում առաջարկվում են LT կամ C նշումով: Ի հավելումն՝ Ընկերությունը նշել է նաև այն փաստը, որ համացանցի միջոցով առաջարկվող 215/75R16 անվադողերը, առանց LT կամ C նշման՝ լրացուցիչ ուսումնասիրության (մոդելի նշմամբ) արդյունքում պարզ է դառնում, որ դրանք նույնպես LT կամ C նշումով են:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Կայացնել «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխանեցնելու մասին որոշում:

2.Կայացնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ դադարեցնելու/լուծարելու մասին որոշում, և/կամ կայացնել նոր գնման ընթացակարգ կազմակերպելու մասին որոշում:

3.Պարտավորեցնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ին կատարել փոփոխություններ կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ, հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները կամ փոփոխություններով հանդերձ կազմակերպել նոր գնման ընթացակարգ:

4.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան որոշում ընդունել ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ:

«Դարֆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն Խորհրդին ուղղված 18.12.2017թ. թիվ 1250 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում ձմեռային անվադողերը և հաշվի առնելով ձմռան մեկնարկը՝ գնման առարկայի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիր կնքելու օրվանից հաշված 5 աշխատանքային օր: Գործող գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի սահմանում ապրանքի մատակարարման նվազագույն ժամկետ: Տվյալ ժամկետում մատակարարման պահանջին կարող են բավարարել տասնյակ մասնակիցներ: Մատակարարման ժամկետը սահմանվել է չխախտելով գործող օրենսդրության պահանջները, մատակարարման սահմանված

ժամկետը օբյեկտիվորեն հիմնավորված է հաշվի առնելով ձմռան մեկնարկը և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Պատվիրատուն ի լրումն վերոհիշյալ գրության՝ 26.12.2017թ. թիվ 1261 գրությամբ հայտնել է, որ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն շահագործում է մարդատար «Ford-Transit» ավտոմեքենաներ, որոնց համար նպատակահարմար չեն օգտագործել «C» նշումով անվադողեր:

«C» նշումով անվադողերը նախատեսված են բեռնատար ավտոմեքենաների համար, անվադողերի բորտը պատրաստված է 8 շերտից, որը անհարկի կոշտացնում և վնասում է ավտոմեքենայի ընթացային մասը: «C» նշումով անվադողերն ավելի թանկարժեք են, քան առանց «C» նշման անվադողերը:

Պատվիրատուին անհրաժեշտ չեն «C» նշումով անվադողեր և ապացուցել հակառակը կդիտվի որպես մատակարարի կողմից պարտադրանք՝ իր մոտ առկա ապրանքը գնորդին իրացնելու համար:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է նաև, որ գործող գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի սահմանում ապրանքի մատակարարման նվազագույն ժամկետ և 5 աշխատանաքային օրը ողջամիտ է դեկտեմբեր ամսին ձմեռային անվադողեր գնելու համար:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2017/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա անվադողերի հետևյալ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	մատակարարման	
					ենթակա ընդհանուր քանակը	Ժամկետը
1	34631140	**ձմեռային** անվադող 215/75-R16	Ավտոմեքենանե-րի անվադող ձմեռային, չափը՝ 215/75-R16	հատ	136	Նախատեսվում է գնել պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Դարֆ» ՍՊԸ-ի 14.12.2017թ. բողոքը, «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի 18.12.2017թ. թիվ 1250 և 26.12.2017թ. թիվ 1261 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին,

ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կողմից «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է ձեռքբերել ավտոմեքենաների 215/75-R16 չափի ձմեռային անվադողեր:

«Դարֆ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ 215/75-R16 չափի ձմեռային անվադողերը թե հայաստանյան և թե միջազգային շուկայում հազվադեպ են հանդիպում և լայն պահանջարկ չունեն սպառողների կողմից, ինչպես նաև դրանք նպատակահարմար չեն Ֆորդ տրանզիտ ավտոմեքենաների համար: Միևնույն ժամանակ անվադողեր արտադրող գործարանները տվյալ թեթև բեռնատար մեքենաների համար նախատեսված 215/75-R16 չափի անվադողեր արտադրում են միայն «C» նշումով:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Խորհրդի կողմից համացանցի համապատասխան կայքերում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 215/75-R16 չափի ձմեռային անվադողերը արտադրվում են տարբեր անվադողերի արտադրողների կողմից և առկա են միջազգային շուկայում և կարող են մատակարարվել մեկից ավելի հնարավոր մասնակցի կողմից, հետևաբար Խորհուրդն գտնում է, որ «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով

չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միևնույն ժամանակ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Խորհուրդն արձանագրում է, որ Տեխնիկական բնութագրի մեջ առկա չէ որևէ հղում Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, այլ ընդամենը սահմանվում են գնման առարկայի այն ընդհանուր տեխնիկական հատկանիշները, որոնցով օժտված առարկան, ըստ Պատվիրատուի, համարվում է իր կարիքին համարժեք:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև, որ գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական նկարագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման: Խորհուրդը գտնում է, որ հրավերի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքն, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն այս մասով անհիմն է:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է գնել 136 հատ 215/75-R16 չափի ձմեռային անվադող, որը, ըստ գնման ժամանակացույցի պետք է

մասնակցի կողմից մատակարարվի պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Այս առումով Խորհուրդը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ 215/75-R16 չափի ձմեռային անվադողերն արտադրվում են որոշ կազմակերպությունների կողմից, այնուամենայնիվ դրանց՝ միջազգայում շուկայում այդքան լայն տարածում չունենալու պայմաններում 136 հատ նշված տեսակի անվադողերը հինգ աշխատանքային օրյա ժամկետում մատակարարելու պահանջն օբյեկտիվորեն կարող է խոչընդոտներ ստեղծել հնարավոր մասնակիցների կողմից Ընթացակարգին մասնակցելու համար, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամաքը, որ Հայաստանի Հանրապետությունում առկա չէ անվադողերի արտադրություն և հայաստանյան շուկայում առկա անվադողերը ներկրվում են արտերկրից, ինչի պայմաններում կարճ ժամկետում օբյեկտիվորեն հնարավոր չէ ներկրել նշված քանակությամբ անվադողեր:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ անվադողերի հնգօրյա ժամկետում մատակարարելու պահանջը կարող է մրցակցության անհավասար պայմաններ ստեղծել հնարավոր մասնակիցների համար, ինչպես նաև հանգեցնել գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Խորոհուրդը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցի մեջ մատակարարման ժամկետը անհրաժեշտ է փոփոխել և նախատեսել այլ ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով մասնակիցների հնարավորինս լայն շրջանակի կողմից ապրանքը մատակարարելու օբյեկտիվ ժամկետները:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ գնման առարկայի մատակարարման ժամկետի մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 14.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ